ՁԵԿՈՅՑ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ
3 ԱՊՐԻԼ 1995

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

digitised by A.R.A.R.@

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ
ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ
ՋԵԿՈՅՑԸ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ
3 ԱՊՐԻԼ 1995, ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ՋԵՐԴ ՍՐԲՈՒԹԻՒՆ,
ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՂԲԱՅՐ
ԳԵՐԱՇՆՈՐՀ, ՀՈԳԵՇՆՈՐՀ ԵՒ ԱՐԺԱՆԱՇՆՈՐՀ ՀԱՅՐԵՐ
ԵՒ ՅԱՐԳԵԼԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐ

Ամենայն Հայոց Հայրապետին Տ. Տ. Վազգէն Սրբազնագոյն Կաթողիկոսին վախճանումով /18 Օգոստոս 1994-ին/, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հայրապետական գահը սգոյ շղարշն զգեցաւ:

Կամօքն Աստուծոյ, Օգոստոս 25-ին գումարուած Եպիսկոպոսաց Ժողովը, Գերագոյն Հոգևոր Խորհուրդի անդամներուն հետ միասին, կատարեց ընտրութիւնը Կաթողիկոսական Տեղապահի: Մենք ստանձնեցինք Տեղապահի պաշտօնը, մեր գլխաւոր պարտականութիւնը նկատելով Գերագոյն Հոգևոր Խորհուրդին հետ միասին Ազգային Եկեղեցական Ժողովի գումարումը, ակնկալուած վեց ամիսներու ընթացքին ընտրելու համար Գահակալը Ամենայն Հայոց Հայրապետութեան Գահին:

Նոյն ժամանակ ջանացինք հետևիլ և հսկել Մայր Աթոռի կազմակերպական բաժանմունքներուն պատասխանատուութեանց և գործունէութեանց, ներքին և արտաքին յարաբերութեանց, անմիջական և անհրաժեշտ կարգադրութիւններ ևս կատարելով:

Միևնոյն ատեն, երբև Հայ Պատրիարք Երուսաղէմի, պարտաւոր էինք մեր կապը պահել Սրբոց Յակոբեանց Միաբանութեան և Պատրիարքարանի գործունէութեանց հետ: Եւ այդ կարելի եղաւ՝ Երուսաղէմ երկու անգամ այցելելով: Առաջինը՝ 1994 Հոկտեմբեր 15-Նոյեմբեր 9, և երկրորդը՝ 1995 Յունուար 12էն Փետրուար 22, Երուսաղէմի յատուկ Նոր Տարուան, այսինքն Յունուար 13ին, և Բեթղեհէմի մէջ Հայկական Մնունդին, այսինքն Յունուար 18ին առիթով: Նաև այդ շրջանին կատարեցինք Երուսաղէմի միաբանութեան, և Իսրայէլի և Յորդանանի հայ համայնքներու անունով ընտրութիւնները Ազգային Եկեղեցական Ժողովին մասնակցող պատգամաւորներուն /Փետրուար 11ին/:

ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1994 Օգոստոս 30-էն մինչև Մարտ 30 ունեցանք Գերագոյն Հոգևոր Խորհուրդի հօքը նիստեր, առաջին նիստէն իսկ կազմելով ուղեցոյցը Ազգային Եկեղեցական Ժողովի գումարման, և հաստատելով առանձին մի գրասենեակ, զբաղելու համար միայն Ազգային Եկեղեցական Ժողովի կարգադրութիւններով: Գրասենեակի վարիչ նշանակեցինք Գերաշնորհ Տ. Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեանը, որ արդիւնաւորապէս և բծախնդրօրէն կատարեց իրեն վստահուած պարտականութիւնը: Ինք և իրեն

digitised by A.R.A.R.@

օժանդակող բոլոր անձերը արժանի են մեր բոլորին շնորհակալութեան և գնահատանքին:

Այս աշխատանքներու և կարգադրութիւններու առիթով ի յայտ եկաւ, որ 35 և աւելի կազմակերպուած և կազմակերպուելիք թեմերէն շատերը չունին թեմական կառոյց, կանոնակարգ և կանոնադրութիւն, ուր բացայայտուած լինեն Թեմական և Ծխական մակարդակներու վրայ գործող մարմիններու և պաշտօնեաներու պարտականութիւնները և փոխ-յարաբերութիւնները: Նաև հարցականի առջև դրուեցան կարգ մը թեմերու իրաւասութեան աշխարհագրական սահմանները իւրաքանչիւր շրջանի մէջ, և հայութեան ընդհանուր թիւը, ըստ այնմ ճշտելու համար ընտրելի պատգամաւորներու թիւը: Նոյնչափ անյստակ էր պատկերը ժողովականներուն, որոնք պիտի հրաւիրուէին իբրև օրինաւոր մարմին, ընտրելու համար թեմին ներկայացուցիչ պատգամաւորները:

Իսկ եկեղեցական ընդհանուր կանոնակարգի և Սահմանադրութեան պակասը աւելի բացայայտ եղաւ:

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՆԵՐԿԱՅ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Գերագոյն Հոգևոր Խորհրդի առաջին նիստին /1994 Օգոստոս 30ին/ նշանակեցին հինգ անձերէն բաղկացած յանձնախումբ մը, որ բանալով հանգուցեալ Հայրապետի կնքուած աշխատասենեակը, ցուցակագրումը կատարեց, զայն գործածելու համար որպէս Տեղապահի գրասենեակ: Իսկ անոր կից սրահը՝ իբրև ժողովատեղի և հիւրասրահ:

Տեղապահը շարունակեց վանատան մէջ բնակիլ:

Վեհարանի առաջին յարկի վրայ Վեհափառի ննջասենեակը և հիւրասենեակը, և երկրորդ յարկի հարաւային թևի պատկերասրահի բաժինը, ցարդ կը մնան կնքուած: Ննջարանի սէյֆի բովանդակութիւնը միայն, թանկարժէք իրերով, ցուցակագրուած է, և սէյֆի արտաքին և ներքին երկու բանալիները կը գտնուին, մէկը՝ Գարեգին Արքեպիսկոպոս Ներսէսեանի, և միւսը՝ պրն. Գրիգոր Խանչեանի մօտ, յանձնուելու համար նորընտիր Կաթողիկոսին:

Պահեստանոցներու բանալիները, մասնաւոր կնիքով միասին, աշխատասենեակին մէջ կը պահուին: Իւրաքանչիւր գրաւոր խնդրագիր, տեղապահի ստորագրութեամբ, կը յանձնուի պատասխանատու անձերուն, որոնք յանձնումը կատարելէն յետոյ, դուռը նորէն կը կնքեն, և բանալին ու կնիքը կը վերադարձնեն աշխատասենեակ:

Մայր Աթոռը ունի հետևեալ գործօն բաժանմունքները ներքին և արտաքին բոլոր գործառնութեանց և յարաբերութեանց համար, որոնք սակայն պէտք ունին հսկողութեան և քաջալերանքի, որպէսզի կարենան աւելի արդիւնաւէտ գործունէութիւն արձանագրել.

Մայր Տաճար և թանգարան
Հոգևոր Ճեմարան
Քրիստոնէական Դաստիարակութեան և Քարոզչութեան Կեդրոն
Դիւանատուն
Հրատարակչութիւն /"Էջմիածին", "Թեմ Եկեղեցւոյ"/
Տպարան

digitised by A.R.A.R.@

"Վանք" դուստր ձեռնարկութիւն
Մոմածուլարան
Գանձատուն-թանգարան
Վանքեր
Վանատուն
Հաշուապահութիւն
Սեղանատուն /մատակարարութիւն/
Շինարարական
Գիւղատնտեսական
Ելեկտրաջերմային տնտեսութիւն
Տնտեսական
Ավտոճանապարհային /փոխադրամիջոցներ/
Պահակային ծառայութիւն
Բարեսիրական սպասարկութիւն
Ֆինանսատնտեսական Յանձնաժողով

1994 Սեպտեմբերէն սկսեալ, ջանացինք մօտէն հետաքրքրուիլ այս բաժանմունքներու կացութեամբ և պաշտօնեաներու գործունէութեամբ:

Գերագոյն Հոգևոր Խորհուրդի նիստերուն մեր գրաւոր տեղեկագիրները մասամբ գաղափար կուտան մտահոգիչ կացութեանց և հարցերու մասին: Զանոնք և ուրիշ տեղեկագիրներ կը կցենք մեր այս տեղեկատուութեան, իբր Յաւելուած.-

1. 1994 Հոկտեմբեր 3ի նիստին Տեղեկատուութիւն
2. 1994 Նոյեմբեր 18ի նիստին Տեղեկատուութիւն
3. 1995 Մարտ 11-13 Տեղապահի այցը Սիւնեաց թեմ
4. Տեղեկատուութիւն Սիւնեաց թեմում կատարուած աշխատանքների /Հայր Աբրահամ Վարդապետ Մկրտչեան/
5. Կանոնադրութիւն Քրիստոնէական Դաստիարակութեան Կեդրոնի
6. Կանոնակարգ Դաստիարակութեան և Քարոզչութեան Կեդրոնի Խորհուրդի
7. "Վանք" դուստր Ձեռնարկութեան Կանոնադրութիւն
8. "Վանք" դուստր Ձեռնարկութիւնը Տնօրէնին յանձնելու Յանձնաժողով
9. "Վանք" դուստր Ձեռնարկութեան Ֆոնտերի Վերագնահատման Հրաման
10. "Վանք" դուստր Ձեռնարկութեան Տնօրէնին հետ կոնդրակտ
11. Ֆինանսատնտեսական Յանձնախումբի Կանոններ
12. Ֆինանսատնտեսական Յանձնախումբի Կանոնակարգ
13. Ֆինանսատնտեսական Յանձնախումբի Կարգ
14. Ֆինանսատնտեսական Յանձնախումբի Կանոնակարգ ընդհանուր դրոյթներ
15. Ֆինանսատնտեսական Յանձնախումբի 1995 թուականի Սոցիալ-Տնտեսական Զարգացման Ծրագիր
16. Շինարարական
17. Ֆինանսատնտեսական Համակարգի կառուցուածքը

digitised by A.R.A.R.@

Մասնաւոր ուշադրութեան կը կարօտի Հոգևոր Ճեմարանը, ուր կ'ակնկալենք որ պատրաստուին հայ ժողովուրդին հոգևոր կարիքները յանձնանձող հոգևորական մշակները և Հայ Եկեղեցու ուսուցումը աւանդող դաստիարակները, մանաւանդ ներկայ շրջանիս համար, երբ Անկախ Հայաստանի տարածքին ազատ մուտք են գործեր կրօնքի և բարեգործութեան գառան մորքով քարոզիչներ:

Հանգուցեալ Հայրապետի քաջալերութեամբ սկսուած Քրիստոնէական Դաստիարակութեան և Քարոզչութեան աշխատանքները կարգաւորելու համար, պատրաստուեցան Կանոնադրութիւնը Կեդրոնին, նշանակուեցան Կեդրոնի Խորհուրդի անդամները և Գրասենեակի տնօրէնը: Աշխատանքները յառաջ պիտի տարուին գլխաւորաբար երեք մարզերու մէջ.- Քարոզչութեան, Կիրակնօրեայ և հանրային վարժարաններու մէջ քրիստոնէական դաստիարակութեան համար ուսուցիչներու պատրաստութեան, և դասագիրքերու հայթայթման: Կեդրոնի Գրասենեակը հաստատուած է Ս. Գայանէի վանքին մէջ:

Մայր Աթոռէն ներս միաբանութեան կազմը կը բաղկանայ երկու Արքեպիսկոպոսներէ, երկու Եպիսկոպոսներէ, հինգ Վարդապետներէ, վեց քահանաներէ և վեց շրջանաւարտ Սարկաւագներէ: Իսկ Մայր Աթոռի հոգատարութեան ենթակայ վեց վանքերու և եկեղեցիներու մէջ կը ծառայեն քսանըեօթը քահանայ հայրեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԵՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

Կրկին անգամ, Մայր Աթոռի անունով մեր շնորհակալութիւնը և երախտագիտութիւնը կը յայտնենք Անկախ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան և անոր Մեծարգոյ Նախագահ Տիար Լևոն Տէր Պետրոսեանին, թէ՛ հանգուցեալ Հայրապետին յուղարկաւորութեան առիթով և թէ ներկայ Ազգային Եկեղեցական Ժողովի կազմակերպման աշխատանքներուն մէջ իրենց ցուցաբերած նախանձախնդրութեան և ներդրումներուն և պետական մակարդակով վայելող կարգադրութեանց համար:

1994 Սեպտեմբեր 17 և 18ին մասնակցեցանք Հայաստանի Հանրապետութեան Հիմնադրամի Հոգաբարձուներու ժողովին, Ատենապետութեամբ Փոխ նախագահ Գագիկ Յարութիւնեանի և ներկայութեամբ Տիար Նախագահին, Վարչապետին, Խորհրդարանի Նախագահին և բազում երկրներէ եկած Հոգաբարձու անդամներու:

Ակնարկութիւններ եղան դրամահաւաքի անբաւարարութեան և եկեղեցական կարգ մը շրջանակներու մէջ աւելի գործօն մասնակցութեան անհրաժեշտութեան:

1994 Սեպտեմբերին, Հայաստանի Հանրապետութեան Մեծարգոյ Նախագահը, պատշաճ գտած էր՝ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Նիւ Եօրքի շէնքին մէջ գետեղելու համար, ՄԱԿ-ի անդամ Հայաստանի անունով յուշակոթող մը նուիրել: Ընդառաջելով Տիար Նախագահի թելադրութեան, Գերագոյն Հոգևոր Խորհուրդի հետ խորհրդակցելով Հին Վեհարանի պատի տակ դրուած խաչքարերէն Աղջոց վանքի ԺԳ դարի պատկանող խաչքարը յանձնուեցաւ Տիար Նախագահին, որ անձնապէս նուիրեց

digitised by A.R.A.R.@

զայն Միացեալ Ազգաց Կազմակերպութեան:

Հայաստանի Մշակոյթի Նախարարութիւնը Գերմանիոյ Պոխում քաղաքի թանգարանի վարչութեան հետ կազմակերպած էր "Հայաստան"ի նուիրուած ցուցահանդէս մը: 1994 Նոյեմբերին, ընդառաջելով դիմումին, Մայր Աթոռի Գանձատունէն տրամադրուեցան եօթը կրօնական առարկաներ, ցուցադրութեան նպատակով և ապահով վերադարձուելու կարգադրութեամբ:

Պետական Ռեգիստրի և Վերլուծութեան Պետական Վարչութիւնը, 1994 Յունիս 30ի գրանցումով և 1994 Յուլիս 27 թուակիր պաշտօնագրով Զօպանճարայի շինարարական գործարանը փոխանցեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, "Վանք" դուստր ձեռնարկութիւն անունով:

Հաստատուած է կանոնադրութիւնը և ստորագրուած է համաձայնագիրը "Վանք" դուստր ձեռնարկութեան տնօրէնի հետ: Մայր Աթոռի ֆինանսատնտեսական Ցանցախումբի հսկողութեան ներքև յուսալից ենք որ այս ձեռնարկութիւնը օգտակար ծառայութիւն պիտի մատուցանէ Մայր Աթոռի շինարարական ծրագիրներու իրագործման մէջ:

Յուշարձաններու Պահպանութեան Վարչութեան 1995 Փետրուար 18ի հրամանագրով, Սիւնեաց թեմի Առաջնորդական Տեղապահ Տ. Աբրահամ Վարդապետ Մկրտչեանի դիմումին ընդառաջելով, և Կրօնից Խորհուրդի Պաշտօնակատար Պրն Լազար Սիւտջեանի հետամտութեամբ, Եղեգնաձորի պատմական Նորավանք եկեղեցին և Սուրբ Փոկաս մատուռը իրենց շրջակայ տարածքներով վերադարձուեցան Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Մոմիկ ճարտարապետի /1307 թ./ գլուխ գործոց Նորավանք եկեղեցւոյ կաթողիկէի և ծածքի նորոգութիւնը աւարտած է և աշխատանք կը տարուի ներքին ընդհանուր նորոգութիւնը ևս ամբողջացնելու:

Վրաստանի Թբիլիսի քաղաքի Նորաշէնի Ս. Աստուածածին եկեղեցին, նախորդ իրաւակարգի և իշխանութեան տասնամեակներուն, գործածուած է որպէս գրադարան:

1994 Դեկտեմբերին գրադարանը փոխադրելու առիթով, կարգ մը վրացի նախանձայոյզներ Հայ Եկեղեցւոյ խորանը քանդեր են, վրացական պաշտամունքին յարմարեցնելու դիտումով, և Նաղաշ Յովնաթանեան որմնանկարներէն ոմանք ևս փչացուցեր են: Հայ ժողովուրդին ընդվզումին և Վիրահայոց թեմի Առաջնորդ Տ. Գէորգ Եպիսկոպոս Սէրայտարեանի բողոքագրի հիման վրայ, մեր հայրենի երկրի նախագահին օժանդակութեան ևս դիմելով, հեռագիրներ ուղարկեցինք Վրաստանի պետութեան ղեկավար Եդուարդ Շեւարնաձէին, Վրաստանի Կաթողիկոս Իլիա Երկրորդին: Իսկ Գերագոյն Հոգևոր Խորհրդի երեք անդամներ /Տ. Գրիգորիս Արքեպիսկոպոս Բունիաթյանը, Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Ներսէսեանը և Պրն. Ռաֆայէլ Պապայեանը/ գործուղեցինք անձնապէս կացութիւնը քննելու և Վրաց Կաթողիկոս Իլիա Երկրորդին նկատառման յանձնելու:

Առ այժմ, եկեղեցւոյ դռները փակ են և վրաց կաթողիկոսի հոգատարութեան յանձնուած:

digitised by A.R.A.R.@

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

Մայր Աթոռի դրամական գումարները որոնք պահուած են Ժընևի Զուիցերական պանքի մէջ, Վեհափառ Հայրապետի վախճանումով կը մնան անձեռնմխելի, մինչև նոր կաթողիկոսի ընտրութիւնը:

Ուստի, ընթացիկ ծախքերը հոգալու համար տրամադրութեան տակ ունէինք և ունինք միայն կանխիկ գումարները, որոնք կը գտնուին հաշուապահի գրասենեակին և Հայաստանի դրամատանց մէջ:

Եկամուտի աղբիւրներն են՝ անհատական նուէրներ, Մայր Տաճարի պաշտամունքային նուէրներ, Մայր Աթոռէն թեմերուն և եկեղեցիներուն հայթայթուած մոմերու, գիրքերու և յուշանուէրներու գումարներ, և թեմերէն ստացուած "Լուսաւորչի Լումայի" նուէրներ:

Բարիզի մէջ, Հայրապետական Պատուիրակ Գերաշնորհ Տ. Գիւտ Արքեպիսկոպոս Նագգաշեանի անունով հաշիւ կայ դրամատան մէջ բացուած, որուն մասին հանգուցեալ Հայրապետին պարբերաբար հաշուետուութիւն կատարուած է մինչև 8 Յունիս 1994:

Երկիցս հաշուետուութիւն խնդրած ենք, և գրաւոր պատասխան չենք ստացած:

Այս հակիրճ և մասնակի տեղեկութիւնները՝ Մայր Աթոռի ընդարձակածաւալ գործունէութեան, և աշխարհացրիւ Հայաստանեայց Եկեղեցւոյ թեմերու կարիքները յանձնանձելու և զանոնք կազմակերպելու պատասխանատուութեան, կը շեշտեն անհրաժեշտութիւնը Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Եկեղեցին օժտելու Ամենայն Հայոց Ընդհանրական Կաթողիկոսով:

Ընտրեալ Հայրապետը պիտի լինի "Մառայ Յիսուսի Քրիստոսի ողորմութեամբն Աստուծոյ, և կամօքն Ազգի Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց, և Մայրագոյն Պատրիարք Համազգական Նախամիծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի":

Սրտագին մեր շնորհակալութիւնը կը յայտնենք Գերագոյն Հոգևոր Խորհուրդի անդամներուն, մեր հոգևորական եղբայրներուն և աշխատակիցներուն Մայր Աթոռէն ներս, մեր Թեմական Առաջնորդներուն և Թեմական Խորհուրդներուն, որոնք իրենց կարգ մը հարցերու կարգադրութեանց համար պարտաւոր էին սպասել Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան:

Մեր շնորհակալութիւնը Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան և Տնօրէն Ժողովի անդամներուն, որոնք Հոգևոր ծառայութեան գիտակցութեամբ ըմբռնեցին և ընդունեցին Կաթողիկոսական Տեղապահի պաշտօնին ժամանակաւոր և յաւելեալ պարտականութեանց մեր ստանձնումը, որու աւարտին մենք պիտի վերադառնանք Երուսաղէմի Պատրիարքութեան և Սուրբ Տեղեաց պահպանութեան մեր նուիրական պարտականութիւններուն, Հայաստանեայց Եկեղեցւոյ և Հայ Ազգի անունով:

digitised by A.R.A.R.@

Կը մաղթենք որ Տիրոջ օրհնութեամբ և Սուրբ Հոգւոյն շնորհաբաշխութեամբ, պատմական և պատկառելի Ազգային Եկեղեցական այս համագումարը, Հայաստանեայց Եկեղեցւոյ կոչումին և առաքելութեան վայել լրջութեամբ, աւարտէ իր խորհրդակցութիւններն ու որոշումները, ընտրէ Ամենայն Հայոց Հայրապետը, և Հայ երգչախումբերը հնչեցնեն Հայրապետական մաղթերգը, ոգևորութեամբ կոչելով. "Տէ՛ր, անսասան պահիր Դու միշտ, Քո իսկ հիմնած Մայր Աթոռ": Ամէն:

ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ

digitised by A.R.A.R.@

Հաշվետվություն

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տարադրամի /ամերիկյան դոլլար/ օգտագործման մասին 1994 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1995 թ. մարտի 20-ը ժամանակաշրջանում

Ստացված եկամուտներ և մուտքեր	Գումարը
1. Պետբանկից	201 500
2. Նվիրատվություններ	12 300
այդ թվում.	
ա) եկեղեցիների շինարարության համար	10 000
բ) օժանդակություններ վճարելու համար	300
գ) ընդհանուր /առանց կոնկրետ նպատակի/	1 000
դ) Սյունաց Թեմի Քրիստոնեական Դաստիարակության և Քարոզչության գրասենյակի համար	1 000
3. Մատուցված ծառայություններից /հոգեհանգիստ և այլն/	2 763
4. Գանձանակներից	1 248
այդ թվում.	
ա) Մայր Տաճար	921
բ) Թանգարաններ	261
գ) Ս. Հռիփսիմե վանք	66
5. Այլ եկամուտներ	383
այդ թվում	
ա) Տպարան	183
բ) Մոմի վաճառք	180
գ) Գրականության վաճառք	20
Ընդամենը	218 194

Կատարված ծախսեր	Գումարը
1. Կապիտալ շինարարություն	73 889
այդ թվում՝	
ա) Սպիտակի եկեղեցի	51 326
բ) Տաթևի վանք	21 063
գ) Եղեգնաձորի եկեղեցի	1 500

digitised by A.R.A.R.@

2. Կաթսայատան և դիզելատան համար վառելանյութի ձեռք բերում	36 903
այդ թվում՝	
ա) սալյարայուղ / 76694 լիտր/	18 883
բ) մազութ /381 տոննա/	18 020
3. Ավտոտնտեսության համար վառելանյութի, յուղի և պահեստամասերի ձեռք բերում	29 594
այդ թվում՝	
ա) բենզին /47 500 լիտր/	19 625
բ) ավտոյուղ / 4836լիտր/	3 818
գ) պահեստամասեր և այլն	6 151
4. Գույքի ձեռք բերում	32 275
այդ թվում՝	
ա) մարդատար ավտոմեքենա 3 հատ	28 440
բ) էլեկտրական ջրատաքացուցիչներ 5 հատ	800
գ) կահույք Քրիստոնեական Դաստիարակության կենտրոնի	3 000
դ) բոր մեքենա /ոսկերչական/	35
5. Տպարանի նյութերի ձեռք բերման համար	2 955
այդ թվում՝	
ա) թուղթ	2 220
բ) այլ նյութեր	735
6. Մոմի արտադրության նյութերի ձեռք բերման համար	10 727
այդ թվում՝	
ա) պարաֆին / 15600կգ/	7 720
բ) ցերեզին /4292 կգ/	3 007
7. Եկեղեցիական մոմեր /14070 կգ/	11 999
8. Աշխատավարձի վճարման համար	5 960
այդ թվում՝	
ա) Մայր Աթոռի աշխատակիցներ	3 800
բ) ֆինանսատնտեսական հանձնախումբ	1 890
գ) տեղեկատու դիվան	270
9. Գործուղումներ	6 593
այդ թվում՝	
ա) Պատրիարք սրբազան	3 316
բ) Ներսես սրբազան	1 150
գ) Միքայել ծ. վարդապետ	670
դ) Սերովբե վարդապետ	407
ե) Վարուժան և Վազգեն սարկավագներ	700
զ) Թադևոս աբեղա	350
10. Նվերների համար	7 400

digitised by A.R.A.R.@

այդ թվում՝	
ա) Վեհափառին ապասարկող բժիշկներ	5 200
բ) Վարազդատ Հարությունյան	1 000
գ) Հակոբ Փափազյան	500
դ) բժշկական անձնակազմ/լրացուցիչ /	700
11. Օժանդակություններ	1 400
այդ թվում՝	
ա) Սպորտային կենտրոն, Կիլիկիա	300
բ) Մինաս Կարապետյան	250
գ) Բաֆֆի սարկավագ	850
12. Մայր Տաճարի թանգարանի նորոգման համար	1 570
13. Այլ ծախսեր	1 114
այդ թվում՝	
ա) փոխանցված է աշխատավարձի վճարման համար	493
բ) բազմացնող մեքենայի նորոգում	95
գ) կոմպյուտերի նորոգում / տիկին Սիլվա/	50
դ) Canon մեքենայի նորոգում	90
ե) քարտեզներ 10 հատ	100
զ) ձայնագրիչների կասետներ 6 հատ	180
է) Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոն	100
ը) ֆաքսի վարձ	6
Ընդամենը	222 379

Ամփոփագիր

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դրամարկղում տարադրամի /ամերիկյան դոլլար/գործառնության մասին 1994 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1995 թ. մարտի 20-ը ժամանակաշրջանում.

Դրամարկղի մնացորդը առ 1.09. 94 թ.	10 737
Դրամարկղի մուտքը 1.09.94 թ.-20.03.95 թ.	218 194
Ընդամենը	228 931
Դրամարկղի ելքը 1.09.94 թ. -20.03. 95 թ.	222 379
Դրամարկղի մնացորդ առ 20. 03. 95 թ.	6 552

Գլխավոր հաշվապահ՝ Հ. Մելյան

digitised by A.R.A.R.@

Հաշվետվություն

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տարադրամի /ամերիկյան դոլլար/ բանկային գործառնության մասին 1994 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 1995 թվականի մարտի 20-ը ժամանակաշրջանում

Բանկի մնացորդը առ 23. 08. 94 թ		78-95
Բանկի մուտք 28.08. 94 թ. /Ընեցարիա/		300 000
	Ընդամենը	300 078-95
Բանկային դեպոզիտներ		922-03
	Ամբողջը	301 000-98
Ելքեր բանկից /կանխիկ/	23.09.94 թ.	11 500
	30.09.94 թ.	30 000
	22.11. 94 թ.	30 000
	10. 12.94 թ.	30 000
	23.12. 94 թ.	20 000
	11. 01.95 թ.	20 000
	25.01.95 թ.	60 000
	ընդամենը	201 500
Հեռախոսի և ֆաքսի վարձ /փոխանցում/		4 271-37
	ընդամենը	205 771-37
Բանկի մնացորդը առ 20.03.95 թ.		95 229-61

/ իննսուն հինգ հազար երկու հարյուր քսանինը դոլլար 61 սենտ/

Գլխավոր հաշվապահ՝ Հ. Մելյան

digitised by A.R.A.R.@

Հաշվետվություն

Մայր Աթոռի Ս. Էջմիածնի 1994 թ. եկամուտների և Մայր Աթոռի ծախսերի

Եկամուտներ	Գումար, դրամ	Ծախսեր	Գումար, դրամ
Մայր Տաճար	8 287 751	Աշխատավարձ	2 413 632
Արարատյան Թեմ	11 230 186	Տրանսպորտի	10 286 681
Ս. Գեղարդ	1 887 978	Կոմունալ	17 066 894
Ս. Խոր Վիրապ	844 789	Միաբանական սեղանատան	3 318 844
Ս. Գայանե	428 297	Դիվանատան	8 430 909
Ս. Աստվածածին	226 403	Շինարարական	39 512 600
Ս. Հռիփսիմե	235 114	Վեհարանի	458 635
Ս. Շողակաթ	65 281	Նոր գույք	8 615 687
Վրացահայ Թեմ	69 510	Ճաշարանի	116 523
Մոմի արտադրություն	451 985		
Հրակտարակչություն	4 460 608	Ընդամենը	90 202 405
Այլ եկամուտներ	1 203 122		
		Հոգևոր Ճեմարանի	7 943 023
		Հրակտարակչության	3 962 649
Ընդամենը	29 391 024	Այլ ծախսեր/թեմեր և այլն/	3 302 686
		Ընդամենը	15 208 358
		Ամբողջը	105 410 763

Արդյունքում. 1994 թ. ծախսերը գերազանցել են եկամուտներին և նվազուրդը կազմել է 76 019 739 դրամ, կամ 304 078 ամերիկյան դոլլարին համարժեք: Այս նվազուրդը փակվել է արտասահմանյան միջոցների հաշվին:

Գլխավոր հաշվապահ՝ Հ. Մելյան

digitised by A.R.A.R.@

Հաշվետվություն

1994 թվականին շինարարական աշխատանքների համար վճարված տարադրամի /ամերիկյան դոլլար/ մասին

հմր. ը/հ	Շինարարական օբյեկտի անվանումը	Գումարը, դոլլար	Գումարը, դրամ
1.	Օշականի եկեղեցի	17 360	5 208 000
2.	Սպիտակի եկեղեցի	87 326	26 197 800
3.	Ս. Խոր Վիրապ	392	117 600
4.	Շիրակի Թեմի առաջնորդարան	10 000	3 000 000
5.	Տաթևի վանք	13 000	3 900 000
6.	Եղեգնաձորի եկեղեցի	1 500	450 000
7.	Մայր Տաճարի թանգարան	1 570	640 000
	Ընդամենը	131 148	39 512 600

Գլխավոր հաշվապահ՝ Հ. Մելյան

digitised by A.R.A.R.@

Հաստատում եմ
Ամենայն Հայոց Կաթողիկոսի
Տեղապահ՝ Գրիգոր արք.Մանուկյան

Բյուջե

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 1995 թվականի

1. Եկամուտներ հազար դրամ

հ/հ	Անվանումը	Վանքերից	Թեմերից	Ընդամենը
1.1	Մոմի արտադրություն	30 000	75 000	105 000
1.2	Տպարան			22 000
1.3	«Վանք» դուստր ձեռնարկություն			5 000
	Ընդամենը	30 000	75 000	132 000

2. Ծախսեր

ա) Ընդացիկ ծախսեր

2.1 Աշխատանքի վճարման	20 000
2.2 Մայր Աթոռի պահպանման ծախսեր /առանց թեմերի/	35 000
2.3 Կենսաթոշակային ֆոնդի և սոցապ հատկացումներ	7 400
2.4 Նյութատեխնիկական մատակարարման	15 000
2.5 Միաբանական սեղանատան և աշխատավորական ճաշարանի	16 000
2.6 Վարչա-կառավարչական	10 000
2.7 Կրոնա-եկեղեցիական	25 000
2.8 Ձեռնարկված ծախսեր	3 600
Ընդամենը	132 000

բ) Ավանդային կարգով շրջանառու միջոցների հատկացումներ

2.9 «Վանք» դուստր ձեռնարկության	15 000
2.10 Մոմի արտադրության	2 000
2.11 Տպարանին	10 000
Ընդամենը	27 000

գ) Կապիտալ ներդրումներ

3.1 Մոմի արտադրության վերազինման համար	3 600
3.2 Տպարանի վերազինման համար	10 000

digitised by A.R.A.R.@

3.3 Սպիտակի նորակառույց եկեղեցու շինարարություն	42 000
3.4 Օշականի բանգարանի վերակառուցման	15 000
3.5 Տաթևի վանքի վերակառուցման	2 000
Ընդամենը	72 600
Ամբողջ ծախսերը	231 000
3.Ծախսերի գերազանցումը եկամուտների նկատմամբ	99 000
4. Բյուջեի ճվազուրդի լրացման աղբյուրները	
— Ներքին Թեմերի նվիրատվություններ	15 000
— Արտասահմանի նվիրատվություններ	80 000
— Գանձակների եկամուտներ	5 000
— Այլ աղբյուրներ	2 000
Ընդամենը	102 000
5. Բյուջեի հաշվեկշիռը ակտիվ	3 000

Հանձնախմբի ատենապետ՝
Վահե Ստեփանյան

digitised by A.R.A.R.@

Արձանագրություն

23. մարտի 1995թ. Ս.Էջմիածին

1995 թ. մարտի 23-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղապահ Ամենապատիվ Տ. Թորգոմ արք. Մանուկյանի ներկայությամբ, Մայր Աթոռի ֆինանսատնտեսական Հանձնախմբի ատենապետ Վահե Ստեփանյանի և գլխավոր հաշվապահ Հարություն Մելյանի մասնակցությամբ, բացվեց Մայր Աթոռի գլխավոր հաշվապահի դրամարկղի 2-րդ հարկաբաժինը, որտեղ ի պահ էր տրված երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի դրամարկղից տեղափոխված տարադրամային գումարները:

Այդ գումարները ըստ առաջին և երկրորդ արձանագրությունների կազմում էին.

1. Ամերիկյան դոլլար	67 887 /վաթսունյոթ հազար ութ հարյուր ութսունյոթ/:
2. Գերմանական մարկ	28 020 /քսանութ հազար քսան/:
3. Շվեցարական ֆրանկ	6 010 /վեց հազար տաս/:
4. Ֆրանսիական ֆրանկ	61 150 /վաթսուն մեկ հազար հարյուր հիսուն/:
5. Ավստրիական դոլլար	620 /վեց հարյուր քսան/:

Որոշվեց. 1. Դրամարկղի 2-րդ հարկաբաժնի արձանագրված գումարները հանձնել Մայր Աթոռի գլխավոր հաշվապահ Հ. Մելյանին այն մուտքագրելու համար:

2. Թույլատրել վերոհիշյալ գումարներից օգտագործել Ազգային Եկեղեցիական Ժողովի կազմակերպման և անցկացման հետ կապված ծախսերի համար:

3. Սահմանված կարգով կոնվերտացիայի ենթարկել գերմանական մարկը, շվեցարական և ֆրանսիական ֆրանկը, ավստրիական դոլլարը:

4. Մայր Աթոռի գլխավոր հաշվապահ Հ. Մելյանին հանձնել այդ դրամարկղի 2-րդ հարկաբաժնի բանալին:

Հանձնախմբի ատենապետ Վ. Ստեփանյան

Գլխավոր հաշվապահ Հ. Մելյան

digitised by A.R.A.R.@

ՅԱՒԵԼՈՒԱԾ

digitised by A.R.A.R.@

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԻ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ 3 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1994 ՆԻՍՏԻՆ

- 1994 Սեպտեմբեր 1-էն սկսեալ Մայր Աթոռոյ պաշտօնէից և ամէնօրեայ այցելուներու հետ հանդիպումներ ունենալէ բացի, հաւաքական հանդիպումներ ունեցանք Մայր Աթոռոյ միաբանական անդամներուն (հոգևորական հայրերուն, վարդապետներուն և քահանաներուն) հետ, նաև սարկաւագաց դասին հետ, ծանօթանալով իրաքանչիւրին պարապմունքին և ստանձնած պաշտօններուն:

- Սեպտեմբեր 14-ին կատարուեցաւ պաշտօնական բացումը Հոգևոր Ճեմարանի 1994-95 տարեշրջանի դասընթացքին, բացման մասնաւոր արարողութեամբ և յայտագիրով:

- Պաշտօնական այցելութիւններ ընդունեցինք պետական անձնաւորութեանց և օտար երկրներու հիւպատոսներու: Անձնապէս այցելեցինք Հայաստանի Հանրապետութեան նախագահին, կարգ մը նախարարներու և հիւպատոսներու:

Մասնակցեցանք Հայաստանի Հանրապետութեան Հիմնադրամի Հոգաբարձուներու ժողովին, Սեպտեմբեր 17 և 18-ին, Ատենապետութեամբ փոխնախագահ Գագիկ Յարութիւնեանի, մասնակցութեամբ նախագահին, վարչապետին, խորհրդարանի նախագահին, և բազում երկրներէ եկած Հոգաբարձու անդամներու:

Ակնարկութիւններ եղան դրամահաւաքի անբաւարարութեան, և կարգ մը թեմերու մէջ եկեղեցւոյ մասնակցութեան և ֆաչալերումին պակասութեան: Ամբողջ Հոգաբարձուները, նախագահին գլխաւորութեամբ, Պետական Պատկերասրահին մէջ դիտեցին ցուցադրութիւնը հայ արուեստագէտներու գործերուն, որոնք նուիրուած էին Հայաստանի Հիմնադրամին:

- Երկու անգամ հանդիպումներ ունեցանք Տնտեսաֆինանսական Յանձնախումբին հետ (Գերաշնորհ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Ներսէսեան, Մինաս Կարապետեան, Պորիս Կարապետեան, Բարսեղ Բեբլոզեան), որու ընթացքին պրն. Գրիգոր Խանջյան կրկնեց թէ անձնական պատճառներով ինք կը հրաժարէր, և կը ջանանք Յանձնախումբին գործունէութիւնը, իրաւունքներն ու պարտականութիւնները յստակել գրաւոր ուղեցոյցին մէջ:

- Համաձայն պետութեան պաշտօնակագրին (27 Յուլիս 1994) Զօպանկարայի գործարանի Վանք Մէկ Դուստր Ջեռնարկութիւնը փոխանցուած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Գոյից ցուցակագրութիւնը տակաւին ամբողջացած չէ: Կը ջանանք յստակացնել կանոնները որով պիտի կառավարուին պատասխանատու անձերը (Յանձնախումբ, Տնօրէն, պաշտօնէութիւն) որոնք պարտին կազմակերպել արդիւնաւետութիւնը գործարանին նախաձեռնութեանց: Պայմանագիր պէտք է ստորագրուի ներկայ Տնօրէն պրն. Ալիկ Աթաեանին հետ:

- Հանդիպումներ ունեցանք Ճարտարապետական և Շինարարական Յանձնա-

digitised by A.R.A.R.@

խումբի անդամներուն հետ, և նկատի առնելով Տաթևի վանքին, Նորավանքին, Սպիտակի նոր կառուցուելիք եկեղեցիին, Օշական Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցւոյ կողքին գտնուող դպրոցի շէնքին նորոգութեան, և Երևանի մէջ 1700 ամեակի առիթով կառուցուելիք Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցւոյ հետ առնչուած հարցեր:

Լոնդոնաբնակ պրն. Ճօրճ Քյուրքճեան, հանգուցեալ Վեհափառ Հայրապետի նախապէս ստորագրած նամակի հիման վրայ, կարողացաւ 300.000 (երեք հարիւր հազար Ամերիկեան տոլար) փոխանցել ժընևի դրամատունէն Երևանի Հայաստանի Պետական դրամատունին Մայր Աթոռոյ հաշուին: Մասնակի յատկացումներ եղան վերոյիշեալ նախաձեռնութեանց:

Տակաւին վերջնական պայմանագրութիւններ չեն յստակուած և ստորագրուած նախաձեռնութեանց շինարարական ընկերութեանց հետ:

- Սեպտեմբեր 10 և 11, Շաբաթ և Կիրակի օրերը այցելեցինք Սիւնեաց թեմը: Ճամբու վրայ հանդիպեցանք, շաբաթ յետ միջօրէին, եղեգնաձոր, Գլաձոր, Ս. Խաչ, Գորիսի Վերնաշէնի մատուռը (որուն բարձունքէն ցոյց տրուեցան Հինգերորդ դարէն մնացած եկեղեցւոյ մը անխնամ մնացորդը), Գորիսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին որուն նորոգութիւնը առաջ կը տարուի ժողովուրդին ջանքերով, և երկյարկանի Առաջնորդարանի շէնքը, որ նոյնպէս նորոգութեան կը կարօտի:

Շաբաթ գիշեր Գորիսէն անցանք Որոտանի Սատանայի Կամուրջը որուն մոտիկն է Հին Տաթեւցիներու Շէնքը, որ այժմ կը գործածուի որպէս բուժարան պատերազմէն վիրաւոր զինուորներու:

Այնտեղ գիշերեցինք մեզի ընկերացողներու հետ (Սիւնեաց թեմի Առաջնորդ Հայր Աբրահամ, մեր գաւազանակիր Հայր Միխայէլ Աջապահեան, Արծուին սարկաւագ՝ Ճեմարանէն, և Միացեալ Նահանգաց Արևելեան թեմի ջանքերով կառուցուող Մանուկներու ճամբարի վերահսկիչ Տէր և Տիկին Ռօյ Քելեքեան):

Կիրակի առաւօտ բարձրացանք Տաթևի վանք ուր կարճ պաշտամունք մը կատարեցինք, և սուրգեղինք շէնքերուն կացութիւնը: Կէսօրին դէպի Մանուկներու ճամբար ճամբուն վրայ (Մարտունիի ուղղութեամբ) հանդիպեցանք Սիսիանի Ս. Յովհաննէս եկեղեցին: Պատարագը աւարտած էր, բայց պակուելիք երիտասարդ զոյգ մը և ժողովուրդը խոնուած էին եկեղեցւոյ մէջ: Երիտասարդ քահանան (ՋՀԱԼԻ) տասներկու մանուկներէ կազմուած երգչախումբ մը ունէր, որ "բարի գալուստի" համար "Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ" երգեց: Եւ մենք մեր օրհնութեան և քաջալերանքի խօսքը տուինք:

Մանուկներու ճամբարը Սմբատայ Դղեակի լեռան ստորոտը կը գտնուի, կարելիութիւններով լեցուն, վազող գետակով և անտառով օժտուած:

Դէպի էջմիածին վերադարձի ճամբուն վրայ, ուշ երեկոյին հանդիպեցանք Նորավանքի հրաշակերտ եկեղեցին, որ նոյնպէս կարիքն ունի անհրաժեշտ նորոգութեան:

- Սեպտեմբեր 20, երեքշաբթի կէսօրին, ընկերակցութեամբ Շիրակի թեմի Առաջնորդ, Գերաշնորհ Տ. Գրիգորիս Արքեպիսկոպոս Բունիաթեանի և գաւազանակիր Հայր Միխայէլի, մեկնեցանք դէպի Սպիտակ, օրհնելու համար կառուցուելիք եկեղեց-

digitised by A.R.A.R.@

ւոյ հողը:

Ճանապարհին մեզ դիմաւորեցին նահանգային և քաղաքային իշխանութեանց ներկայացուցիչներ, և առաջնորդեցին բարձունք մը ուր կառուցած են շատ տպաւորիչ յուշարձան մը յանուն Ս. Երրորդութեան՝ երեք խաչերով բարձրացած: Դէպի յուշարձան բարձրացող ճանապարհին երկու կողմերը տեղաւորած են մարմարէ տապանաքարերը, իւրաքանչիւրին վրայ արձանագրելով՝ գիւղին անունը և այդ գիւղէն զոհուած մարտիկներու թիւը: Այդ Յուշարձանը շրջակայքին ուխտատեղին է դարձեր: Հոգեհանգստեան մեր աղօթքը ըրինք, և անցանք դէպի Սպիտակ:

Բազմութիւնը հաւաքուած էր բացաստանին վրայ, մատաղի պատրաստութիւններով, դպրոցական աշակերտներով և գեղչկական նուագարաններով, որոնք հողի օրհնութեան և ներկայացուցիչներու քաշալերանքի խօսքերէն յետոյ երգեցին և պարեցին:

Սպիտակի եկեղեցւոյ հողի օրհնութենէն յետոյ, այցելեցինք բլուրին ստորոտը կառուցուած վարժարանը ուր երեք-չորս հարիւր ուսանողներ մօտակայ գիւղերէն կուգան, և մասնաւորաբար կազմակերպուած մրցոյթներու կը մասնակցին: Երգի և նուագի կոկիկ յայտագիր մը ներկայացուցին:

Գիւղատնտեսական հիմնարկի մը ճաշարանին մէջ տրուած ընթրիքէն յետոյ, գիշերը վերադարձանք Մայր Աթոռ:

- Սեպտեմբեր 21, Հորեքշաբթի առաւօտ ժամը 10-ին, Հայաստանի Հանրապետութեան անկախութեան երրորդ տարեդարձին առիթով, Երևանի անկախութեան հրապարակի վրայ, նախագահին և պետական պաշտօնատարներուն հետ ներկայ եղանք Զինուորական Շքերթին: Մեզի կ'ընկերակցէին Արարատեան թեմի Հայրապետական Փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Ներսէսեանը, Դիւանապետ Գերաշնորհ Տ. Ներսէս Արքեպիսկոպոս Պօղոսպալեանը, "Էջմիածին" ամսագրի խմբագիր Գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Արիստակէսեանը, Հայր Միքայէլ և Հայր Առաքել:

Մէկ ժամ տևող շքերթէն, օդանաւերու և ուղղաթիռներու հրապարակին վերևէն անցքէն յետոյ, ճամբուն վրայ գացինք Եռաբլուր, ուր պետութիւնը կառուցած է պատերազմի զոհերու գերեզմաններու շիրմաքարերը: Զինուորներու առաջնորդութեամբ, իրենց բերած ծաղկեպսակը զետեղուեցաւ նշանակուած տեղը, ուր նաև կատարեցինք հոգեհանգստեան կարգը:

- Նոյն երեկոյին, ժամը 7-ին, Մարզական համալիրին մէջ դարձեալ հոգևոր հայրերու ընկերակցութեամբ, մասնակցեցանք Հայաստանի նախագահի հրաւէրով կազմակերպուած հրապարակային հիւրասիրութեան՝ մտիկ ընելէ յետոյ նախագահին ճառը, անկախութեան երրորդ տարեդարձին առիթով:

- Հայաստանի նախագահին փափաքին ընդառաջելով, Հին Վեհարանի շրջափակի խաչքարերէն մին յանձնեցինք պետութեան, որ նախագահին Միացեալ Ազգաց ժողովին մասնակցելուն առիթով պիտի ներկայացուէր որպէս Հայաստանի նուէրը, զետեղելու համար Միացեալ Ազգաց շէնքին մէջ:

digitised by A.R.A.R.@

- Հայաստանի մշակոյթի նախարարը ներկայացուց խնդրանքը Գոխումի (Գերմանիա) թանգարանի Տնօրէնութեան, Հայ մշակոյթի ցուցահանդէս կազմակերպելու իրենց թանգարանի մէջ: Մայր Աթոռէն ևս կարգ մը առարկաներ խնդրած են: Գանձատան պատասխանատուին (Անդրանիկին) ցանկ մը կազմել տուինք առարկաներու որոնք թերևս կարելի է տրամադրել, այսպիսի խնդրանքներու եթէ որոշենք ընդառաջել:

- Հանգուցեալ Հայրապետի գրասենեակի ցուցակագրումը ամբողջացաւ, սէյֆի մէջի գոյքը փոխադրուեցաւ Վեհի ննջասենեակի սէյֆին մէջ, ուր կը պահուին մնացեալ բոլոր սէյֆերուն բանալիները: Եւ ննջասենեակի սէյֆին երկու բանալիները կը գտնուին Գարեգին Արքեպիսկոպոս Ներսէսեանի և պրն. Գրիգոր Խանչեանի մօտ, ըստ հանգուցեալ Վեհի փափաքին:

- Համակարգիչներ (կոմպյուտերներ) հաստատուեցան Վեհարանի այն գրասենեակին մէջ որ, Գերաշնորհ Տ. Վաչէ Արքեպիսկոպոս Յովսէփեանի պատասխանատուութեամբ, յառաջիկայ Ազգային Եկեղեցական ժողովին հետ կապուած, գրասենեակային աշխատանքները պիտի կատարէ: Նաև Հոգևոր Ճեմարանի մէջ, ուր շրջանաւարտ սարկաւագներուն համակարգիչի դասեր պիտի տրուին:

- Օգոստոս 29, երկուշաբթի յետ միջօրէին, ներկայ գտնուեցանք Հանգուցեալ Հայրապետի յիշատակին նուիրուած համերգին, նախաձեռնութեամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայաստանի ֆիլհարմոնիկ նուագախումբի, ղեկավարութեամբ Լորիս Ճգնաւորեանի: Ասմունքողն էր Վլադիմիր Արաջեան: Հովանաւորութեամբ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան:

- Սեպտեմբեր 28, երկուշաբթի ցերեկին մասնակցեցանք Ակադեմիայի կազմակերպած "Հրաչեայ Աճառեանի" յիշատակին նուիրուած գիտաժողովին, որուն բացումը կատարուեցաւ Օփերայի սրահին մէջ, ուր նաև ներկայացուեցաւ Պողիկդոս թատերգութիւնը:

- Հաշուապահ տեղեկատուութիւն-
առ 1 Հոկտեմբեր 1994

- Առկախ մնացած հարցեր.-
Մէկ մասը առկախ մնացած հարցերուն հետևեալն է.-
. Տպարանի կացութիւնը և Հրատարակչական Յանձնախումբի մը կազմութիւնը և ասոնց գործունէութեան ուղեցոյցը.
. Քրիստոնէական դաստիարակութեան կեդրոնի կազմութիւնը.

- Գրասենեակ, կանոնադրութիւն, պիւտճէ, պաշտօնէութիւն.
Պահեստներու և գնումներու վերահսկողութիւնը.

digitised by A.R.A.R.@

. Միաբանութեան բժշկական հոգատարութիւնը.
. Միաբանութեան զգեստագինը.
. Ամսականներու վերանայում.
. Թեմերու օժանդակութիւն:

- Հոկտեմբերի երկրորդ շաբթուն կը ծրագրենք Երուսաղէմ երթալ:
Հարկ եղած կարգադրութիւններ կ'ընենք և ձեզ տեղեակ կը պահենք:

- Մայր Աթոռի կազմակերպական ցուցատախտակը պատրաստուած է:
Գաղափար մը կուտայ Մայր Աթոռին բաժանմունքներու թուին և ըստ այնմ անհրաժեշտ կազմակերպական յարաբերութիւններուն:

digitised by A.R.A.R.@

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹԻՒՆ ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԻ 18-19 ՆՈՅԵՄԲԵՐ 1994 ՆԻՍՏԻՆ

- Նախքան դէպի Երուսաղէմ մեր մեկնիլը Հոկտեմբեր 12-ին, Սպիտակի կառուցուելիք եկեղեցւոյ հիմքերու և 16 հիմնաքարերու օրհնութեան արարողութիւնը կատարեցինք Հոկտեմբեր 9, Կիրակի յետ միջօրէին, առընթերակից ունենալով Շիրակի Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գրիգորիս Արքեպիսկոպոս Բունիաթեանը, Ռազմիկ Վարդապետ Պողոսեանը (Երուսաղէմի միաբաններէն) և շրջանի հոգևորական հայրերը:

Դէպի Սպիտակ մեր ճամբուն վրայ հանդիպեցանք Օշական, Ս. Մեսրոպի գերեզմանին, մասնակցեցանք Ս. Պատարագին, տեսանք մանուկներու և դպրոցական պատանիներու խումբեր որոնք շրջափակին մէջ իրենց ուսուցիչներու շուրջ հաւաքուած, նուագի և արտասանութեան իրենց յայտագիրները կը կատարէին: Տեսանք նաև անաւարտ թանգարանին անխնամ թողուած շինարարութիւնը, որուն տանիքը տարի մը առաջ պէտք էր ծածկուած և աւարտած ըլլար:

Այցելեցինք ոչ շատ հեռուն, բլրան վրայ գտնուող հին և աւերակ երկրորդ մատուռ մը, և ապա Ապարանի պագիլիֆատիպ եկեղեցին որ փակ էր, և վերանորոգման շինարարական ընթացքի մէջ:

Անակնկալ էր, երբ նախքան Սպիտակի Եկեղեցւոյ հիմնաքարէքի օրհնութիւնը, առաջնորդուեցանք ընդարձակ հրապարակ մը, ուր շրջակայ քաղաքներէն, իրարանցիւր խումբ իր թոռի և աշակերտութեան ընդոյշները մէկտեղուած, ոմն ոմի տեղաւորուած, բերքի տօնահանդէս կազմակերպած էին, խրախճանքի, երգի, պարի, ամուսնիի յայտագիրներով:

Այստեղ ևս, հոգևորական հայրերով կատարեցինք "Անդաստանի" արարողութիւնը, և քաղաքային ղեկավարներու կարգին, մեր քաղաքներանի և օրհնութեան մաղթանքները տուինք:

- Հոգևոր Ճեմարանի արահին մէջ, Հոկտեմբեր 4-ին, Կոմիտաս վարդապետի ծննդեան 125 ամեակին առիթով, Ս. Հռիփսիմէ Կիրակնօրեայ վարժարանի մօտ 50 աշակերտներ համերգով և Գարոյր Սեակի "Անլռելի Զանգակատուն"էն հատուածներ արտասանելով, մէկ ժամ տևող կոմիտասեան երգեր երգեցին գնահատելի նրբութեամբ և զգացումով:

- Հոկտեմբեր 10 և 11-ին, Ռուսստանի Դաշնութեան խորհրդարանի նախագահ Վլադիմիր Շումէյքօ, Հայաստան իր այցելութեան առիթով, այցելեց Էջմիածնի Մայր Տաճար, և Գանձատուն. և Վեհարանի մէջ տրուած ընդունելութեան ընթացքին իրեն նուէր տրուեցաւ Էջմիածնի Գանձեր հատորը: Գարոն Շումեյքօ Երևանի մէջ ներկայ եղաւ Պետական Համալսարանի 75 ամեակի հանդիսութեան, Օպերայի դահլիճին մէջ: Իսկ իր կողմէ տրուած պաշտօնական ընդունելութեան, իր խօսքին մէջ, իր հիացմունքը յայտնեց հայ ժողովուրդի պատմութեան, մշակոյթին, և հոգևոր ժառանգութեան, որ կը մարմնանար ներկայութեամբը Էջմիածնի Մայր Տաճարին և հոգևոր գանձերուն:

- Վեհարանին մէջ հանդիպում ունեցանք Գիւմրիէն բերուած մօտ 30 ուսանողներու, որոնք Գրիգորիս Սրբազանի և ուսուցիչներու հոգածութեամբ կը

digitised by A.R.A.R.@

հետևին Հոգևոր Ճեմարանի դասընթացքները:
- Հոկտեմբեր 12-15 գտնուեցանք Փարիզ, երևանէն երուսաղէմ ճամբու վրայ: Հանդիպումներ ունեցանք Հայրապետական Պատուիրակ և Փարիզի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գիւտ Արքեպիսկոպոս Նազգաշեանի, Գերմանիոյ թեմին Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գարեգին Եպիսկոպոս Գէֆճեանի, Լիոնի շրջանի Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ Գերաշնորհ Տ. Նորվան Եպիսկոպոս Զաքարեանի և հոգևոր հայրերուն և աշխարհական ներկայացուցիչներու հետ, անդրադառնալով Ազգային Եկեղեցական ժողովի կապակցութեամբ Գերագոյն Հոգևոր Խորհուրդի ժողովի մէջ կատարուած աշխատանքներուն:
- Հոկտեմբեր 16-Նոյեմբեր 8, Երուսաղէմի մէջ, Տնօրէն ժողովի նիստերուն և միաբանական հաւաքոյթներուն ընթացքին, անդրադարձանք հանգուցեալ Վեհափառ Հայրապետի թաղման առիթով եղած պատշաճ կարգադրութեանց և պետական հովանաւորութեան, քառասունքի արարողութեանց, Եպիսկոպոսաց ժողովին, Կաթողիկոսական Տեղապահի ընտրութեան, և Գերագոյն Հոգևոր Խորհրդի նիստերուն մէջ Ազգային Եկեղեցական ժողովի գումարման կապակցութեամբ տրուած որոշումներուն:

Երուսաղէմի վանական կեանքը, Սուրբ Տեղեաց մէջ ծառայութիւնը և պաշտամունքները, կրթական և այլ բաժանմունքներու գործունէութիւնը կը շարունակուին կարելի կանոնաւորութեամբ: Շինարարական ծրագիրները առաջ կը տարուին Սուրբ Աթոռին համար նպաստաւոր պայմաններով:
- Հոկտեմբեր 26-ին տեղի ունեցաւ Իսրայէլի և Յորդանանի միջև կնքուած դաշինքին և համաձայնագրին ստորագրութեան արարողութիւնը, Էլաթին մօտ, անապատ շրջապատի մը կիզիչ արևուն ներքև, մօտ վեց հազար հրաւիրեալ անձերու ներկայութեան: Համաձայնագիրը ստորագրեցին Իսրայէլի և Յորդանանի վարչապետները, և նոյն վաւերագրերուն իբրև վկայ ստորագրեցին Յորդանանի Հիւսէյն թագաւորը և Միացեալ Նահանգաց Նախագահ Հիլ Քլինթը:
- Ժառանգաւորաց վարժարանը, մօտ հարիւր աշակերտներով, ուսուցիչներով և պաշտօնեաներով, կ'ընթանայ կարելի կանոնաւորութեամբ: Ներկայ եղանք աշակերտներէ կազմուած նուագախումբին ներկայացուցած երգի, ասմունքի և զուարթաբանութեան հրապարակային յայտագրին: Ժառանգաւորաց վարժարանի սրահին մէջ ներկայացուեցաւ նաև Փարաջանովի "Նռան գոյնը" շարժանկարին առաջին ժապաւէնը, որ պաշտօնապէս արգելուած էր ցուցադրել: Հրաչեայ Գրիգորեանի որդին Սարգիս Գրիգորեան որ աշխատակիցը եղած է Փարաջանովին, մի կերպ ազատագրած էր ժապաւէնը, և ցուցադրեց հետաքրքրական և լուսաբանիչ բացատրութիւններ տալով Սայաթ Նովայի կեանքին հետ կապուած Խորհրդանշական" պատկերացումներու մասին:
- Նոյեմբեր 9-ին Երուսաղէմէն երևան ճամբուն վրայ, Սոչի հանդիպեցանք: Հոգեշնորհ Տ. Եզնիկ Մ. Վարդապետ Պետրոսեանը, իբրև Հիւսիսային Կովկասի մէջ Առաջնորդի Փոխանորդ, շրջանի հոգևոր հայրերուն հետ կարգադրութիւններ կատարած էին տեսնելու մեր կառուցուող և մատուռ-եկեղեցիներէն ոմանք, պաշտամունքի համար հաւաքուած ժողովուրդին հետ լինելու և խօսելու: Հանդիպումներ ունեցանք Ատլեր քաղաքի Հայ Քաղաքագլուխին հետ, և ճաշկերոյթի հրաւիրուած հայկական Միութիւններու ներկայացուցիչներու և

digitised by A.R.A.R.@

եկեղեցաշէն բարերարներու և Ռուս հոգևոր առաջնորդին հետ: Բազմացեղ շրջան մը է Սոչի (110 տարբեր ցեղերէ) և յայտնապէս հայերը իրենց ազգային ինքնութիւնը, մշակոյթը, և գործունէութիւնը պահելու պայքարի մէջ են:

- Նոյեմբեր 11-ին Սոչիէն ժամանեցինք Մայր Աթոռ:

Մայր Աթոռի բաժանմունքներէն ոմանք գնահատելի աշխատանք են կատարած:

- Քրիստոնէական դաստիարակութեան յանձնախումբ մը ունինք գլխաւորութեամբ Հոգեշնորհ Տ. Վազգէն Արեղայ Միրզախանեանի, որ հակառակ անբաւարար միջոցներու, կը ջանան օժանդակել մեր թեմերու զանազան քաղաքներու մէջ սկսուած Կիրակնօրեայ Դպրոցներուն, և ծրագրած են ուսուցիչներ պատրաստել այդ դասընթացքներուն համար: Վերջերս, Գայեանէի վանքին մէջ գրասենեակ մը կարողացան ապահովել, զոր կահաւորեցին: Իսկ նոյն տեղը օգտագործող Երիտասարդաց խումբը փոխադրուած է Ս. Հռիփսիմէի վանքին մէջ:

- Հոգևոր Ճեմարանի աշակերտներուն համար ամբռայնի զգեստներ հայթայթուած են պահեստի ապրանքներէն տրամադրելով:

- Շէնքերու և սենեակներու ջեռուցման համար կաթսայատունը նորոգուած է, և ջեռուցման գործիքները վերահաստատուած և կարգաւորուած են: Ապահովուած են ամբռնայնի մթերքներ թէ՛ ջեռուցման և թէ՛ ուտեստեղէնի համար:

- Շնորհակալութիւն կը յայտնենք Կ. Պոլսոյ Ամենապատիւ Պատրիարք Գերաշնորհ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Գազանճեանին, որ բժշկական խնամքի և զործողութեան կարօտ մեր երեք միաբաններուն համար Պոլսոյ Ս. Փրկիչ հիւանդանոցին մէջ ընդունուելու կարգադրութիւնները կատարած է: Տ. Թադէոս Վարդապետը և երկու սարկաւագներ՝ Վարուժան և Վազգէն, ստամոքսի խոցի ցաւերէն բուժուած պիտի վերադառնան Մայր Աթոռ:

- Ֆինանսատնտեսական Յանձնախումբի համար պատրաստուած կանոնադրութիւնը դեռ երէկ վերջին սրբագրութեան ենթարկուեցաւ: Եւ յոյսով ենք որ պատասխանատու անձերու նշանակումով Յանձնախումբը իր գործունէութեան պիտի ձեռնարկէ:

- Զօպանմարայի գործարանի փոխանցման գործողութիւնները տակաւին չեն ամբողջացած: Գերմանական ընկերութիւնը, երկու հարիւր հազար գերմանական մարքի պահանջ մը ներկայացուցած է: Իսկ Տնօրէնի և պաշտօնեաներու յարաբերութիւնները և պատասխանատուութիւնները ճշտող կանոնադրութիւնը նոյնպէս պէտք ունի յստակացման:

- Իսկ վանքին տպարանը կը մնայ զուրկ տպագրական ամբողջական գործիքներու օգտագործումէն: Նոյնպէս հրատարակութեանց կարելիութիւնը, հրատարակչական յանձնախումբի մը չգոյութեան պատճառաւ:

digitised by A.R.A.R.@